Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 10

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան 22 մայիսի 2024թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանին, ով ներկայացրեց նիստի օրակարգը, որի հիմնական հարցը «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացմումն է՝ համաձայն ԵՊՀ ռեկտորի № 89/88-Լ (առ 10.05.2024թ.) հրամանի: Նա գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ մրցույթին մասնակցելու համար դիմել է միայն ք.գ.թ., դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանը, ում կողմից ԵՊՀ որակավորման մանդատային հանձնաժողովին ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը: Դրական եզրակացություն ստանալուց հետո Հ.Մ. Սիմոնյանի թեկնածությունը քննարկվել է Ֆարմքիմիայի և

ֆարմակագնոզիայի ամբիոնում, ինչպես նաև մրցութային հանձնաժողովում: Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան՝ հայտարարված մրցույթին մասնակցելու համար (ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի քաղվածքները կցվում են): Ելույթ ունեցավ նաև գիտքարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանը, նշեց, որ մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող բոլոր պահանջներին:

Հ.Մ. Սիմոնյանը հեղինակ է 25 գիտական աշխատանքների, որոնցից 6-ը բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում և 29 գիտաժողովների զեկուցման թեզիսների: Վերջին երեք տարում հրապարակել է 5 գիտական հոդված և 2 ուսումնամեթոդական աշխատանք: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 10 մագիստրոսական թեզեր և 25 դիպլոմային աշխատանքներ: Վերջին երկու տարում սոց. հարցման միջին միավորը բարձր է 4.5-ից:

Առաջարկվեց Հ.Մ. Սիմոնյանի թեկնածությունը ներառել քվեաթերթում՝ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով հայտարարված մրցույթի փակ գաղտնի քվեարկության անցկացման համար:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակից Հ.Մ. Սիմոնյանին երաշխավորել Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ ք.գ.թ. Ս.Հ. Ափոյան

անդամներ՝ դ.գ.թ. Լ.Յու. Սահակյան

ուսանող՝ Մ.Վ. Զաքարյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (20-անդամներից ներկա էին 14-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են

գիտխորհրդի 14 անդամներ։ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար Հ.Մ. Սիմոնյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 14 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝0։

Որոշեցին ՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Հ.Մ. Սիմոնյանին համարել ընտրված Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնում։

Գիտական խորհրդի նախագահ՝
բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ա. Դաղայան**